ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 դեկտեմբերի 2024 թ. N 317-Ա

«ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի՝
որոշում եմ

1. «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 04215828) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.Հայտնում եմ, որ Ջերմուկի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 16.05.2023թ-ին կնքվել է N ՋՀ-ԲՄԱՇՁԲ-23/5 ծածկագրով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի խմելու ջրի ակունքի հիմնանորոգման աշխատանքների կատարման գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր): Հիշյալ պայմանագրի շրջանակներում «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ն պարտավորվել է կատարել Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի խմելու ջրի ակունքի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), որի ժամկետը սահմանված էր մինչև 07.08.2023թ.-ը ներառյալ:Հաշվի առնելով «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ի՝ 31.07.2023թ.-ի գրությունը և N ՋՀ-ԲՄԱՇՁԲ-23/5 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.8 կետերը՝ պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող N 1 համաձայնագրով աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև 06.09.2023թ.-ը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության՝ 28.12.2023թ.-ի N 2340-Ա որոշումը, պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող N 2 համաձայնագրով աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև 01.11.2024թ.-ը: Նշված ժամանակահատվածներում Ջերմուկի համայնքապետարանի աշխատակիցների կողմից բանավոր կերպով բազմիցս զգուշացվել և տեղյակ է պահվել «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ին՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև կատարված աշխատանքների մեջ բազմաթիվ թերություններ ունենալու և այդ թերությունները ժամանակին շտկելու մասին, ինչպես նաև տեղեկացվել է 27.08.2024թ-ի թիվ 971 ելից գրությամբ: Ջերմուկի համայնքապետարանի կողմից՝ 17.09.2024թ-ի թիվ 1025 ելից գրությամբ «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ին հերթական անգամ տեղեկացվել է աշխատանքների թերությունների, դրանց վերացման, ինչպես նաև աշխատանքներին վերաբերվող քաղաքաշինական փաստաթղթերի ներկայացնելու մասին և տրվել է ողջամիտ ժամկետ մինչև 01.10.2024թ-ը՝ նշված թերությունները վերացնելու և փաստաթղթերը ներկայացնելու համար: Ի պատասխան Ջերմուկի համայնքապետարանի՝ 17.09.2024թ-ի թիվ 1025 ելից գրության՝ 30.09.2024թ-ին «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ից ստացվել է գրություն խնդրանք առ այն, որպեսզի աշխատանքների թերությունների վերացման ողջամիտ ժամկետ

սահմանվի 01.11.2024թ-ը, ինչին Ջերմուկի համայնքապետարանի կողմից առարկություն չի եղել: 01.11.2024թ-ին «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ից ստացվել է գրություն խնդրանք առ այն, որ պայմանագրով նախատեսված աշխատանքները ամբողջությամբ կատարվել են, վերացվել են հայտնաբերված բոլոր թերությունները, ինչի կապակցությամբ պետք է ձևավորել աշխատանքների արդյունքը ընդունող հանձնաժողով:Օրենքով սահմանված կարգով ձևավորվել է աշխատանքների արդյունքը ընդունող հանձնաժողով, կատարվել է այցելություն աշխատանքների շինարարական հրապարակ, որտեղ պարզվել է աշխատանքների որոշ բաղադրիչների նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու և նշված թերությունները չշտկելու փաստերը:

Հաշվի առնելով վերոգրյալները և համաձայն Ջերմուկի համայնքապետարանի և «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ի միջև՝ 16.05.2023թ-ին կնքված N ՋՀ-ԲՄԱՇՁԲ-23/5 ծածկագրով պայմանագրի 3.1.4 կետի, Ջերմուկի համայնքապետարանը 26.11.2024թ.-ից միակողմանի լուծել է «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ի հետ՝ 16.05.2023թ-ին կնքված N ՋՀ-ԲՄԱՇՁԲ-23/5 ծածկագրով պայմանագիրը, որի ծանուցումը հրապարակված է տեղեկագրում: «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները տուժանքի համաձայնագրերի տեսքով 27.11.2024թ-ին սահմանված կարգով ներկայացվել են «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ին՝ համաձայնագրերով նախատեսված գումարները Ջերմուկի համայնքապետարան փոխանցելու նպատակով, սակայն պահանջը «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից մերժվել է:

3.Հաստատել գործընթացի վերաբերյալ տեղեկությունները համաձայն հավելվածի:

4.Սույն որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրել լիազորված մարմնին և «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ին:

5.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2024 դեկտեմբերի 06
Ջերմուկ

Հավելված
Ջերմուկ համայնքի ղեկավարի
2024 թվականի դեկտեմբերի 06-ի N 317-Ա որոշման

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ	ՀՎՀՀ 04215828	Արարատի մարզ, գ.Բերքանուշ		X		Որոշման ամսաթիվը՝06.12.2024թ. Ընթացակարգի ծածկագիր ՋՀ-ԲՄԱՇՁԲ-23/5

Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ Սմբատ Պապոյան